

ԻՐԱՔԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԸ ՊԱՇՏՈՆԱԶՐԿՈՒԵՑԱԿ

Իրաքի Դաշնային գերագոյն դատարանը վճռեց պաշտօնազրկել խորհրդարանի նախագահ Մոհամմատ Ալ Յալալուն: Նախագահին դեմ դատ բացուած էր խորհրդարանի պատգամաւորի մը կողմէ գեղծարարութեան ամբաստանութեամբ: Դատարանը նաեւ պաշտօնազրկեց դատ բացող երեսփոխանը:

ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Լարուած կացութիւնը շարունակուեցաւ հարաւային Լիբանանի մէջ: Զնգապալլա յայտարարեց, թէ թիրախ



դարձուցած է իսրայէլեան ուժերու շարժուն ջոկատներ, հրասայլեր եւ խարիսխներ: Իր կողմէ, իսրայէլեան բանակը յայտարարեց, թէ թիրախ դարձուցած է Զնգապալլի ենթակառոյցը եւ հակազրահապատ ջոկատներ:

Իսրայէլեան օդուժը նմակոծեց հարաւային Լիբանանի Այթարուն գիւղի արեւմտեան մասը:

ՊԸՐՐԻ ԶԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի յայտարարեց, թէ իսրայէլեան քաղաքականութիւնը՝ ընդարձակելու իր ոտնձգութեան սահմանը, կրնայ պատճառել մեծ մագլցում շրջանին մէջ: Պըրրի ընդունեց Միացեալ ազգերու կազմակերպութեան ԵՈՒՆԻՖԻԼ ուժերու ընդհանուր հրամանատար զօրավար Արլոլտո Լաթարոս եւ յայտարարեց, թէ Իսրայէլ թիրախ կը դարձնէ թղթակիցներ, քաղաքացիներ եւ շտապ օգնութեան ծառայողներ: Ան կը նմակոծէ հարաւային Լիբանանը եւ կը սպառնայ մայրաքաղաք Պեյրութին: Այս քաղաքականութիւնը կրնայ դուռ բանալ մեծ մագլցումի շրջանին մէջ:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

Իսրայէլի արտաքին գործերու նախարար Էլի Բոնէն յայտարարեց, թէ Միացեալ ազգերու կազմակերպութեան ընդհանուր քարտուղար Անթոնիօ Կուրթերէ յարմար անձը




չէ վարելու այդ պաշտօնը: Ան անելցուց, որ Կուրթերէ բնաւ չքաջալերեց շրջանին մէջ խաղաղութեան հուլովոյթը: Բոնէն յայտարարեց, թէ Կուրթերէ պետք է ազատ ազգերու օրինակին հետեւելով կոչ ուղղէր Կազան ազատագրելու «Յամաս» շարժումէն:

ՅԱՐԶԱԿՈՒՄ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽԱՐԻՍԻՆԻ ԿՐԱՅ



Ռուսական «Սփութնիք» լրատուական ընկերութիւնը յայտարարեց, թէ արեւելեան Սուրիոյ շրջանին մէջ գտնուող «Քոնտքո» ամերիկեան խարիսխը ենթարկուած է նմակոծումի:

ԻՍՐԱՅԷԼ ՊԵՏԵ Է ԴԱՏՈՒ



Իրանի Արտաքին գործերու նախարարութեան խօսնակ Նասեր Զանանի դատապարտեց իսրայէլեան նմակոծումը Կազայի հատուածին մէջ գտնուող Կազայի վերակառուցումի քաղաքական յանձնախումբի կեդրոնին վրայ: Ան անելցուց, որ այսպիսի ոճիրներ ցոյց կու տան Իսրայէլի իսկական դէմքը: Ըստ խօսնակին, մարդկային խիղճը վիրաւոր է Կազայի մէջ պատահած դէպքերէն: Այն չի կրնար լուռ մնալ պատահածին դիմաց:

ԿԱԶԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Գրաւեալ Պաղեստինի Կազայի հատուածին մէջ կը շարունակուին պատերազմական գործողութիւնները մէկ կողմէ պաղեստինեան կազմակերպութիւններու զինեալ ջոկատներուն «Ալ Զասսամ»ի գլխաւորութեամբ, միւս կողմէ իսրայէլեան բանակին կողմէ: Կազա քաղաքի հիւսիսային շրջանին մէջ «Ալ Զասսամ»ի զինեալներ յարձակեցան իսրայէլեան մեքենայացուած ջոկատի մը վրայ,



կործանեցին հրասայլ մը եւ մարդատար գրահապատ մը՝ գործածելով «Եսաին 105» հակազրահապատ հրթիռներ: «Ալ Զասսամ» նմակոծեց նաեւ «Ռահիմ» խարիսխը: «Ալ Զասսամ» նաեւ հարուածեց երկու հրասայլ Կազա քաղաքի արեւմտեան հատուածին մէջ: Գումարտակը նաեւ նմակոծեց Կազայի կեդրոնական հատուածին մէջ հաւաքուած իսրայէլեան ուժեր գործածելով «Ռաժում» 114 միլլիմետրոնց հրթիռներ:

Իսրայէլեան բանակը յայտարարեց, թէ կրցած է վար առնել օդային թիրախ մը, որ կ'ուղղուէր հարաւային շրջանի Իյլաթ Նաւահանգիստին ուղղութեամբ: Անելի կանուխ պայթումի ձայն մը լսուած էր Իյլաթի մէջ: Պայթումի ձայներ լսուեցան նաեւ մայրաքաղաք Թել Աւիվի մէջ:

ՉՈՅԵՐՈՒ ԹԻՒՆ ԿԱՍԱՒ 11.500-Ի


Կազայի մէջ պաղեստինեան կառավարական աղբիւր մը յայտարարեց, թէ 7 Գոլտեմբերին սկսած պաղեստինեան գործողութեան ետք տեղի ունեցած նմակոծումին



հետեւանքով պաղեստինցի զոհերու թիւը հասած է 11.500-ի, իսկ վիրաւորներուն թիւը հասած է 29 հազարի: Ան անելցուց, որ Կազայի հատուածը կ'ենթարկուի ծրագրուած ջարդի մը:

ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐ ԿՐԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԵՆ

Պաղեստինեան «Ժիհադ Իսլամի» կազմակերպութեան ընդհանուր քարտուղար Չիատ Նախիալէ յայտարարեց, թէ իրենք դժգոհ են Կազայի մէջ գերիներու հարցով տեղի



ունեցող բանակցութեան հուլովոյթն ու իր կազմակերպութիւնը կրնայ հեռանալ անկէ: Իր կազմակերպութիւնը կրնայ պահել գերիները մինչեւ որ պայմանները փոխուին:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՃԸ



Պրագիլի նախագահ Լուիս Ինասիօ Լուլա Տա Սիլվա յայտարարեց, թէ Իսրայէլի կեցուածքը երեխաներու եւ կիներու հանդէպ կը նմանի հալոցողութեան: Ան անելցուց, որ «Նոյնիսկ եթէ գիտնամ որ երեխաներու գտնուած վայրին մէջ հրէք մը կայ, այդ հրէքը սպաննելու համար այդ երեխաները չեն սպաններ»:

ՓԱՇԻՆԵԱՆ ՊԻՏԻ ԶՄԱՍՆԱԿՅԻ

Պելառուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշենքո հանգիստ ձեռով արձագանգած է Զայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի որոշումին՝ չմասնակցելու 23 Նոյեմբերին Մինսքի մէջ գումարուելիք ԶՊԿ-ի գերաստիճան-



նին: Երէկ հեռախօսային հաղորդակցութիւն տեղի ունեցած է Փաշինեանի եւ Լուքաշենքոյի միջեւ: Օրակարգի հարցերէն մէկն էր հարաւային Կովկասի վիճակը, երկրորդ՝ յարաբերութիւնները եւ ԶՊԿ գերաստիճանի օրակարգը:

Լուքաշենքո յորդորած է Փաշինեանին շտապ քայլեր չառնել ու լրջօրէն մտածել յաջորդ քայլերուն մասին, որոնք կրնան հասցնել կազմակերպութեան հեռանալուն:

«ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ» ԸԱՅՆ

Ատրպէյճանի Պետական ապահովութեան ծառայութեան պետ Ալի Նազիբի Պաքուի մէջ ժողով գումարած է ԵԱԶԿ-ի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Փիա Զաւունայի հետ ու յայտարարած է, թէ որոշ պետութիւններու կողմէ Զայաստանի զինուոր անընդունելի է:



Ան անելցուցած է, թէ այն ժամանակ որ շրջանին մէջ խաղաղութիւն հաստատելու լուրջ հեռանկար կայ, անընդունելի է որ կարգ մը պետութիւններ զինեն Զայաստանը, իրավիճակը կրկին սրելու առիթ տալով: Նազիբի նաեւ պահանջած է ԵԱԶԿ-էն ճնշում գործադրել Զայաստանի վրայ, որպէսզի ականապատուած դաշտերու ճշգրիտ քարտէզներ փոխանցէ իրենց:

ԴԱՆԻՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՍԿԱՒ ԲՆԱՐԿԵԼ


Դանիոյ խորհրդարանը սկսաւ քննարկել օրինագիծ մը, որ կ'արգիլէ իսլամներու սուրբ գիրք «Քորան»ի հրկիզու-



մը: Այս հոլովոյթը սկսաւ՝ առաջը առնելու համար իսլամական երկիրներու մէջ տեղի ունեցող ցոյցերուն «Քորան» հրկիզելու արարքին դէմ բողոքելու համար:

ԼՐՏԵԱԸ ՅԱՅՏՆՈՒԵՑԱԿ

Իրաքեան պատկերասփիւռի կայան մը պատկերասփիւռը կը կարգ մը քաղաքացիներու հրեայ գերիին, որ առեւանգուած էր Իրաքի մէջ ինը ամիս առաջ: Ան ընդունեց, թէ կ'աշխատէր «Մոսատ»-ի եւ ամերիկեան գաղտնի գործակալութեան հաշուոյն: Ան Իրաք մտած էր ռուսական անցագիրով:



«ՄԵՆՔ ԿԸ ՎԵՐԱՅԱՍՏԱՏԵՆՔ ԶԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՐՏԱՅՐԱԴԵՐՆԵՐՈՒՆ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ԶԱՐՑՈՎ ՄԻԱՑԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԶԵՏ ՍԵՐՏՕՐԵՆ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆԸ»

ԸՍԱԾ ԶՅ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ

Միացեալ Թագաւորութեան մէջ ԶՅ դեսպանութեան կողմէ կազմակերպուած է պաշտօնական ընդունելութիւն՝ ի պատիւ ԶՅ արտաքին գործերու նախարարի այցի, ի նշանաւորումն Միացեալ Թագաւորութեան մէջ ԶՅ դեսպանութեան նոր շէնքի բացման եւ ԶՅ-ՄԹ ռազմավարական երկխօսութեան մեկնարկին:



Միջոցառման մասնակցած են ՄԹ խորհրդարանի պատգամաւորներ, արտաքին, համագործակցութեան եւ զարգացման նախարարութեան ներկայացուցիչներ, Միացեալ Թագաւորութեան մէջ հայկական համայնքի, հասարակական-քաղաքական գործիչներ:

Ողջոյնի եւ շնորհաւորական խօսքով հանդէս եկած են ԶՅ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը եւ ՄԹ արտաքին, համագործակցութեան եւ զարգացման նախարարութեան Արեւելեան Եւրոպայի եւ Կեդրոնական Ասիոյ վարչութեան տնօրէն Քրիս Ալանը, ՄԹ-ի մէջ ԶՅ դեսպան Վարուժան Ներսիսեանը:

Արարատ Միրզոյեան իր խօսքին մէջ մասնաւորապէս նշած է.

«Մենք այստեղ ենք երկու կարեւոր առիթներով. առաջին հերթին նշելու Լոնտոնի սրտին մէջ գտնուող Զայաստանի նոր դեսպանութեան բացումը: Մեզի համար այս շինութիւնը կը նշանաւորէ Միացեալ Թագաւորութեան հետ Զայաստանի յարաբերութիւններու կարեւորագոյն փուլը եւ ի ցոյց կը դնէ այն նշանակութիւնը, որ մենք կու տանք ընդհանուր արժեքներուն, փոխադարձ յարգանքի եւ խաղաղութեան, ժողովրդավարութեան եւ տնտեսական զարգացման վրայ հիմնուած մեր յարաբերութիւններու խորացման:

Այս տարի Զայաստանն ու Բրիտանիան կը նշեն դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 32-ամեակը, սակայն մեր կապերը դարերու պատմութիւն ունին: Այս լուրջ հիմքերուն վրայ Զայաստանն ու Միացեալ Թագաւորութիւնը զգալի յառաջընթաց արձանագրած են քաղաքական երկխօսութեան եւ տնտեսական համագործակցութեան ամրապնդման, առեւտրային աւելի ամուր կապերու խթանման եւ զբօսաշրջութեան, կրթութեան ու

մշակոյթի միջոցով ժողովուրդներու միջեւ աւելի սերտ փոխգործակցութեան խթանման գործին մէջ: Դեսպանութեան նոր շէնքին բացումը մեր ամուր յարաբերութիւններուն եւ համագործակցութիւնը խորացնելու պատրաստակամութեան վկայութիւնն են:

Մենք այստեղ ենք նաեւ Զայաստանի եւ Միացեալ Թագաւորութեան միջեւ ռազմավարական երկխօսութեան հաստատումը նշելու համար: Սա իսկապէս նոր փուլ է մեր երկկողմ յարաբերութիւններուն մէջ, որ մեզի կը տրամադրէ տարածաշրջանային անվտանգութեան, կայուն զարգացման եւ մարդու իրաւունքներու կարեւոր ոլորտներու մէջ համագործակցութիւնը ամրապնդելու ընդլայնուած շրջանակ: Ռազմավարական երկխօսութեան միջոցով մենք կը վերահաստատենք Միացեալ Թագաւորութեան հետ սերտօրէն աշխատելու մեր յանձնառութիւնը՝ համաշխարհային մարտահրաւերներուն դիմակայելու եւ մեր ընդհանուր շահերը յառաջ մղելու հարցով:

Մենք երկար ճանապարհ ունինք անցնելու, եւ այդ ճանապարհին կարեւոր շրջադարձը կը սկսի այստեղ եւ այսօր: Մենք կը ձգտինք երկկողմ համագործակցութեան աւելի յաւակնուտ օրակարգի՝ Զայաստան-ՄԹ Զամապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի ստորագրման միջոցով: Այս համաձայնագիրը մեզի ամուր իրաւական հիմք պիտի ընձեռէ յարաբերութիւնները նոր մակարդակի բարձրացնելու համար՝ ի շահ երկու ժողովուրդներուն:

Զայաստանը կը հպարտանայ այն զգալի յառաջընթացով, որ մենք ձեռք բերած ենք ժամանակակից, ժողովրդավարական, շուկայական ուղղութիւնով ունեցող, բաց եւ կենսունակ հասարակութիւն կառուցելու գործին մէջ: Մենք երախտագիտութեամբ կ'ընդունինք Միացեալ Թագաւորութեան շարունակական ներդրումը այս շանքերուն մէջ, եւ այսօր Զայաստանն ու Միացեալ Թագաւորութիւնը միասին են՝ որպէս ժողովրդավարութեամբ հպարտացող երկիրներ:

Չնայած այն մարդասիրական եւ անվտանգային մարտահրաւերներուն, որ Զայաստանը կ'առաջադրէ, կ'ուզեմ ձեզի վստահեցնել, որ մենք հաստատապէս յանձնառու ենք մեր ժողովրդավարական ձգտումներուն: Մենք կը շարունակենք կեդրոնաւալ մեր տարածաշրջանին մէջ խաղաղութեան, կայունութեան եւ համագործակցութեան հաստատման հնարաւորութիւններուն վրայ: Այս առումով, Զայաստանի վարչապետը վերջերս ներկայացուցած է «Խաղաղութեան խաչմերուկ» նախագիծը, որուն առանցքային եռութիւնը հաղորդակցութիւններու զարգացումն է ճանապարհներու, խողովակաշարերու, մալուխներու եւ հոսանքագիծերու վերանորոգման, կառուցման եւ գործարկման միջոցով: Այն կրնայ կարեւոր դեր խաղալ հիւսիսը հարաւին եւ արեւմուտքը արեւելքին կապելու գործին մէջ:

Կստահ եմ, որ միասին կրնանք նպաստել խաղաղութիւնը եւ արդարութիւնը արժեւորող համաշխարհային հանրութեան՝ հիմնուած աճող մարտահրաւերներուն միասնաբար դիմագրաւելու համերաշխութեան վրայ:

ԶԶՈՒԵԼԻ ԱՇԽԱՐՀ

Կրողված էմ մեզ յուսախաբ ըրած Ռուսիոյ լարախաղաց կեցուածքէն:

Կրողված էմ Ուքրանիոյ տրուած Արեւմուտքի անվտանգութեան աջակցութենէն:

Կրողված էմ Ռուսիոյ եւ Արեւմուտքի՝ Թուրքիոյ հետ ունեցած սիրաբանութենէն:

Կրողված էմ եկեղեցականներու կողմնակալ քաղաքականութեան խաղալէն:

Կրողված էմ մեզի պարտութիւն բերած մարդոց յոխորտագին բարբառելէն:

Կրողված էմ տիտղոսաւոր հայերու «պետք է որ» ըսելով յօղուածներ գրելէն:

Կրողված էմ անհասարար ուժերով կռուիլ պահանջողներու «հերոսութիւններէն»:

Կրողված էմ քաղաքակիրթ կոչուող աշխարհի երկու կողմով դիրքորոշուելէն:

Կրողված էմ տեղահանուածներու թշուառութիւնը կանխել չուզող աշխարհէն:

Կրողված էմ պետութեան ներկայացուցիչ յարգել չգիտցող երիտասարդներէն:

Կրողված էմ ինքնապաշտպանութեան անուսով մատուցելու ծեր սպաննողներէն:

Կրողված էմ ցեղասպանութեան կողմէ ուրիշը ցեղասպանութեան ենթարկելէն:

Կրողված էմ ցեղասպանողի կողմէ ուրիշին բարոյագիտութիւն սորվեցնելէն:

Զգուելի աշխարհ:

Կրողված էմ քաղաքակրթութեան բարիքներով եւ միջազգային օրէնքներով հանդէս եկող մարդոց շահախնդիր ու շահափառ կողմնակցութիւնը դիտելէն:

Կրողված էմ քաղաքակրթ կոչուող այն աշխարհէն, որ կու տայ Զոսովոյի ինքնորոշման իրաւունք (self determination) եւ այդպիսի իրաւունք չ'ուզող տալ արցախահայութեան:

Զգուելի աշխարհ:

Կրողված էմ քաղաքակրթ կոչուող աշխարհէ մը, որ Պարէստիսի մէջ ժողովուրդ մը ամբողջ անարդարօրէն բանտի մէջ պահուած տեսնելը ընդունելի կը գտնէ եւ բանտապահին անմարդկային բարբարոսութիւնները ինքնապաշտպանութիւն (self defence) կը նկատէ:

Զգուելի աշխարհ:

Կրողված էմ քաղաքակրթ կոչուող աշխարհէ մը, որ Պարէստիսի մէջ ժողովուրդ մը ամբողջ անարդարօրէն բանտի մէջ պահուած տեսնելը ընդունելի կը գտնէ եւ բանտապահին անմարդկային բարբարոսութիւնները ինքնապաշտպանութիւն (self defence) կը նկատէ:

Զգուելի աշխարհ:

Ներելի է Զամասեր ու Զըզալլաներ սհաբեկիչ նկատել, բայց ներելի չէ Իսրայէլը սհաբեկիչ պետութիւն սեպել:

Արդեօք Արեւմուտքը չի՞ գիտեր, թէ Պըն Լատիսներ, Զամասեր եւ Զըզալլաներ կը ծնին ի հետեւանք այն բռնութիւններուն եւ ճնշումներուն, որ կը կիրարկեն իրենց եւ իրենց ծնունդ Իսրայէլը:

Զգուելի աշխարհ:

Կրողված էմ մարդս իրեն նման մարդուն վրայ ինքզինք գերադաս նկատելէն:

Կրողված էմ զոհն ու ռճրագործը նոյն կշիռով կամ հաւասար նկատողներէն:

Կրողված էմ ուրիշին զոհողութիւնը չարաչար օգտագործող սմետողներէն:

Կրողված էմ անտառի օրէնքով գործող փողկապակի մարդակերներէն:

Զգուելի աշխարհ:

Ինչո՞ւ Արեւմուտքին ներելի է Զոսովոս անկախ դարձնել եւ նոյն անկախութեան արժանի Արցախը իր ժողովուրդէն բռնահանուած դարձնել:

Ինչո՞ւ Ռուսիան Ուքրանիոյ մէջ Տոնպասի եւ Տոնեցքի ռուսներուն փրկութեան ձեռք երկարելու պատերազմ պիտի հռչակէր եւ Արցախի հայերուն նման բան պիտի չընէր՝ օգնելով իր դարաւոր բարեկամ ու փոքր եղբայր Զայաստանին, որ Արցախը փրկուէր:

Զգուելի աշխարհ:

Ինչո՞ւ հայրենասիրութիւն խաղացողները Փաշինեանը կը մեղադրեն անտեղի պատերազմ հրահրելուն համար՝ իր «Արցախը Զայաստան է ու վերջ» ըսած ըլլալով, եւ չեն մեղադրեր իրենց գլխին պատկանող բարձրաստիճան շէֆերը մեր բանակին, որոնք խաբեցին զինք երկու օրէն Պաքոն գրաւելու մեծխօսիկութեամբ:

Միթէ նոյնը չէ՞ր պարագան Եփրատի նախագահ Լաւրենտի, որ պատերազմի գնաց Իսրայէլի դէմ՝ վստահելով զինք խաբող մարաշախտ Ամերի թոյլ բանակին:

Զգուելի ու հազար անգամ զգուելի աշխարհ:

ՄԻԱՑԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՐՈՊԱՅԻ ԶԱՐՑԵՐՈՎ ՆԱԽԱՐԱՐԸ ՅԱԶՈՐԴ ՇԱԲԱԾ ԿԸ ՆԱԽԱՏԵՍԷ ԱՅՑԵԼԵԼ ԶԱՅԱՍՏԱՆ

Բրիտանիան պիտի ընդլայնէ Զայաստանի հետ կապերը առեւտրի եւ անվտանգութեան ոլորտին մէջ՝ կառուցելով աւելի սերտ համագործակցութիւն եւ գանազանեցնելով Զայաստանի տնտեսական յարաբերութիւնները: Ըստ Զայաստանի մէջ բրիտանական դեսպանատան տարածած հաղորդագրութեան, Լոնտոնի մէջ կայացած միջոցառման ժամանակ ըսած է ՄԹ Եւրոպայի հարցերով նախարարը:



Հաղորդագրութեան մէջ կը նշուի, որ Լեօ Տոքերթին ԶՅ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի հետ ՄԹ-Զայաստան առաջին ռազմավարական երկխօսութեան ընթացքին այս յանձնառութիւնը ստանձնած է՝ հիմնուելով ընդհանուր շահերու շուրջ ընկալումներու վրայ:

«ՄԹ Եւրոպայի հարցերով նախարար Լեօ Տոքերթին առաջարկած է սերտացնել Զայաստանի հետ առեւտրի եւ անվտանգութեան ոլորտին մէջ համագործակցութիւնը՝ օգնելու գանազանեցնել Զայաստանի տնտեսութիւնը եւ խթանել տարածաշրջանային անվտանգութիւնը:

Տոքերթին ընդգծած է Զայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան ուղիղ բանակցութիւններու իրատակ անհրաժեշտութիւնը՝ երկարաժամկետ խաղաղութեան եւ կայունութեան հասնելու համար:

Ան ողջունած է կառավարման եւ օրէնքի գերակայութեան ոլորտներուն մէջ շարունակական համագործակցութիւնը, որ կ'օգնէ ամրապնդել Զայաստանի քաղաքական ու տնտեսական դիմակայունութիւնը», նշուած է դեսպանութեան տարածած հաղորդագրութեան մէջ:

Երկխօսութենէն յետոյ ՄԹ Եւրոպայի հարցերով նախարարը ըսած է. «Դրական քննարկում ունեցած ենք ՄԹ-Զայաստան ռազմավարական երկխօսութեան առաջին հանդիպման ընթացքին: Կայ զգալի դրական մղում եւ հնարաւորութիւն՝ ամրապնդելու եւ խորացնելու մեր երկկողմ յարաբերութիւնները: Մենք կը տեսնենք Զայաստանի կառավարութեան պատասխանատու եւ դրական մօտեցումը:

(Շար.ը տեսնել 3րդ էջ)

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԱՄԷ-Ն ԲՆՆԱՐԿԱԾ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԲՆԱԳԱՎԵՂՈՒՄԻՆ ՄԷՋ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ԶԱՐԿԱՅՄԱՆ ՀՆՈՒՄԱԿՐՆԵՐՈՒՄ ԳՐԱՆՉՈՒՂ ՀԱՐՅԵՐ

Զայաստանի Զանրապետութեան պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանը հանդիպած է Արաբական Միացեալ Եմիրութիւններու պաշտպանութեան պետական նախարար Մոհամմատ Ահմատ ալ Պովարտիի հետ: Պապիկեանը այս մասին տեղեկացուցած է Ֆէյսպուք ընկերային ցանցի իր էջով կատարած գրառման միջոցով:



«ԱՄԷ այցի շրջանակներուն մէջ՝ 14 Նոյեմբերին, հանդիպում ունեցած էմ ԱՄԷ պաշտպանութեան պետական նախարար Մոհամմատ Ահմատ ալ Պովարտիի հետ:

Զանդիպման մասնակցած է նաեւ ԶՅ բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարար Ռոպերթ Խաչատրեանը:

Ընկալուած են ԶՅ եւ ԱՄԷ միջեւ պաշտպանութեան բնագաւառին մէջ համագործակցութեան զարգացման հեռանկարներուն առնչուող հարցեր:

Երկուստեք մեր պատրաստակամութիւնը յայտնած ենք՝ շանքեր գործարդելու համագործակցութեան զարգացման եւ զայն իրաւական հիմքերու վրայ դնելու համար», ըսուած է գրառման մէջ:

ՄԹԹ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

ՀՀ ԿԳՄՄ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿՐ ՆԱԽԱՏԵՍԷ ՄԻՆՉԵՒ 2027 ԹՈՒՆԿԱՆԸ ԵՐԵՍՈՒՄՆ ՅՈՒՇԱՐԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆՎՆԵԼ

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ մարմնակրթության նախարարությունը կը նախատեսէ մինչեւ 2027 թուականը երեսուն մշակութային յուշարձան վերականգնել:



Այս մասին ըսաւ ՀՀ ԿԳՄՄ նախարարի տեղակալ Ալֆրէտ Զոհարեանը:

«Ոլորտի գերակայութիւնն է պետական խորհրդանիշ հանդիսացող յուշարձաններու ճարտարապետական և նախագիծերու պատրաստումը, յուշարձաններու ամրակայումը, նորոգումը: Մեծ ուշադրութիւն պիտի դարձնենք բերդերուն, ամրոցներուն, քանի որ անոնք յատկապէս ամրակայման ու վերականգնման կարիք ունին», ըսաւ ան եւ յանդէպ յուշարձաններու վերականգնման համար պետական պիտուճէն յատկացուող միջոցները 2022 թուականի նախորդ երկու տարիներուն համեմատ աւելցած են շուրջ 300 տոկոսով՝ կազմելով շուրջ 400 միլիոն ՀՀ դրամ:

Անոր խօսքով՝ 2023-ին յատկացուած է 660 միլիոն ՀՀ դրամ, որ կը նախատեսուի ընթացիկ վերաբաշխումներու բերումով հասցնել 1 միլիարդ դրամի, իսկ մինչեւ 2027 թուականը այդ պիտուճէն կը նախատեսուի հասցնել 2 միլիարդ դրամի, ինչ որ աննախադէպ է:

«Մինչեւ 2027 թուական կը փափաքինք վերականգնել 30 յուշարձան, սակայն հնարաւոր է գերակատարել այդ թիւը: Մենք չենք մոռնար նաեւ դժուարիասանելի վայրերու մէջ կառուցուած յուշարձաններու մասին եւ այնտեղ հասնելու հետաքրքրական ու տարատեսակ լուծումներ կը գտնենք. 2023-ին Կայանքերդ տանող արահետը կահաւորուած է Հոլանտայի դեսպանատան հետ համատեղ: Այժմ կայ քայլարշաւային հայ-հոլանտական արահետ: Կը նախատեսուի մինչեւ 2027 թուական յիսուն նման ճանապարհ կարգաւորել», տեղեկացուց փոխնախարարը:

Նախարարութիւնը կը կարելորէ նաեւ ԵՈՒՆԵՍԿՕ-ի համապատասխան ցանկին մէջ հայկական յուշարձաններու ընդգրկումը եւ մտադիր է մինչեւ 2027 թուական մէկ կամ երկու յուշարձան ներառել այդ ցանկերուն մէջ:

«Հայաստանի, Սփինոքի եւ Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգութեան պահպանութեան անվտանգութեան միջազգայնացման ռազմավարութիւն մշակող եւ իրականացնող կենտրոն կ'ուզենք ստեղծել, որ պիտի գործէ Յուշարձաններու գիտահետազոտական պետական ոչ-առեւտրային կազմակերպութեան կազմին մէջ: Յուշարձաններու կառավարման պիտի ստեղծենք, որուն մեկնարկը տրուած է նախարարութեան կառուցածքային փոփոխութիւններու շրջանակներուն մէջ, 2024-էն այն պիտի գործէ, իսկ յուշարձաններու ելեկտրոնային շտեմարանի ստեղծումը եւ 1500 թուականացուած յուշարձանները եւս մեր ընդլիցներու ցանկին մէջ են», շեշտեց Զոհարեան:

Ան յիշեցուց, որ 2022 թուականի Մայիսի յուշարձանները համակարգող օրէնքը արդիականացուած է: Վերջին անգամ այն թարմացուած էր 1998 թուականին:

ՄԻԱՑԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՐՈՂԱՅԻ ԶԱՐՑԵՐՈՎ...

(Շարունակուած Ա. Էջէն)

այդ դիրքորոշում է՝ միտում խաղաղութեան կառուցման եւ ցանկութեան՝ զարգացնելու առեւտրային կապերը ոչ միայն Միացեալ Թագաւորութեան, այլեւ ամբողջ Կովկասի հետ: Մենք իսկապէս կը կարելորենք Հայաստանի որպէս տարածաշրջանային պատասխանատու դերակատարի հետ ունեցած մեր յարաբերութիւնները:

Տարածաշրջանին մէջ տեղի ունեցած վերջին իրադարձութիւններուն անդրադառնալով՝ ՄԹ նախարարը ընդգծած է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջազգային միջնորդութեամբ բանակցութիւններուն արդիւնաւետ ներգրաւման հրատապ անհրաժեշտութիւնը՝ խաղաղութեան պատմական համաձայնագրի հասնելու համար:

Սեպտեմբերին Միացեալ Թագաւորութիւնը 1 մլն սթերլին տրամադրած է Կարմիր խաչի միջազգային կոմիտէին (ԿԿՄԿ)՝ սատարելու Լեռնային Ղարաբաղի եւ լայն տարածաշրջանին մէջ ստեղծուած իրավիճակին մարդասիրական աջակցութեան:

ՄԹ Եւրոպայի հարցերով նախարարը վերահաստատած է Միացեալ Թագաւորութեան յանձնառութիւնը՝ աջակցելու Հայաստանի ժողովրդավարական եւ կառավարման բարեփոխումներուն:

Այս ֆինանսական տարուան մէջ Բրիտանիան 1,8 միլիոն սթերլին տրամադրած է «Լաւ կառավարման հիմնադրամի» (GGF) միջոցով Հայաստանի մէջ ֆինանսաւորող ծրագրերու համար, որոնք կը խթանեն ներառականութիւնը, նորարարութիւնը եւ տնտեսական աճը:

13 Նոյեմբերին տեղի ունեցած ռազմավարական երկխօսութիւնը համընկած է Հայաստանի դեսպանութեան նոր՝ Լոնտոնի Փոլ-Մոլ պողոտային վրայ գտնուող շէնքի բացման հետ: Նոր շէնքը հնարաւորութիւն պիտի տայ ընդլայնելու դեսպանութեան ծառայութիւնները Միացեալ Թագաւորութեան եւ Հայաստանի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու ամրապնդման գուզընթաց:

Տոբերթին պիտի շարունակէ ռազմավարական երկխօսութեան թեմաներու քննարկումը Երեւանի մէջ՝ յաջորդ շաբաթ նախատեսուող իր այցի ընթացքին:

ՀՀ ԿԳՄՄ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿՐ ՆԱԽԱՏԵՍԷ ՀԱՄԱՐԵԼ ՈՉ-ՆԻԻԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՅԱՆԿԵՐԸ

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ մարմնակրթության նախարարութիւնը գերակայութիւն կը համարէ ոչ-նիւթական մշակութային ժառանգութեան պահպանութեան, փոխանցման ու հանրայնացման ուղղուած քաղաքականութիւնը:

Նախարարութիւնը յառաջիկային կը նախատեսէ համալրել ոչ-նիւթական մշակութային ժառանգութեան ցանկերը, ոչ-նիւթական մշակութային ժառանգութեան շտեմարանը:



ՀՀ ԿԳՄՄ նախարարի տեղակալ Ալֆրէտ Զոհարեան ըսաւ, որ ոչ-նիւթական մշակութային ժառանգութեան ցանկին մէջ 72 արժէք արձանագրուած է, այդ թիւը պիտի աճի: «Կը կարելորենք նաեւ ոչ-նիւթական մշակութային ժառանգութեան շտեմարանի համալրումը, թուային փորթալի ստեղծումը, Լեռնային Ղարաբաղէն բնի տեղահանուածներու ոչ-նիւթական մշակութային ժառանգութեան մշակույթի պահպանութիւնը, այդ ժառանգութեան գոյքագրումը, պահպանութեան եւ փոխանցման ապահովումը, օրինակ՝ բարբառները, երգն ու պարը, աւանդույթները եւ այլն», նշեց Զոհարեան:

Անոր կարծիքով՝ անհրաժեշտ է նաեւ ընդլայնել ոչ-նիւթական մշակութային ժառանգութեան պահպանութեան գործընթացներուն մէջ համայնքներու ժառանգութիւնը կրող խումբի, անհատներու, հասարակական եւ մշակութային կազմակերպութիւններու ներգրաւուածութիւնը, նպաստել միջազգային համագործակցութեան ու հայկական ոչ-նիւթական մշակութային ժառանգութեան միջազգային հանրահռչակման:

Ըստ նախարարութեան՝ հայկական ոչ-նիւթական մշակութային ժառանգութեան միջազգային հանրահռչակման միջոցով Հայաստանի ճանաչելիութեան բարձրացումը պիտի ըլլայ ի նպաստ երկրի կայուն զարգացման եւ տնտեսական յառաջընթացին: Ոլորտի միջազգային հանրահռչակումը կ'իրականացուի միջազգային տարբեր միջոցառումներուն մասնակցութեամբ, ինչպէս նաեւ ԵՈՒՆԵՍԿՕ ներկայացուող դիմումներու գրանցմամբ:

ԱՏՐՊԵՅՃԱՆԸ ՇԱՐԻՆԱԿԱԲԱՐ ԱՂԱՅՈՒՅԱԾ Ե ՀԱՅ-ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՈՐԵՒԷ ՀԱՄԱԿԵՆՈՒԹԻՒՆ ԲԱՅԱՌԵԼՈՒ ԶԳՏՈՒՄԸ. ԿԱՐՏԱՆ-ՇԻՐՎԱՆ-ՆԱԽԻՉԵԱՆ ՄՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Գարտման-Շիրվան-Նախիջեան համահայկական միութիւնը արձագանգած է Ատրպէյճանի նախագահ Իլիամ Ալիեւի յայտարարութեան ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Փիա Զաւումանի հետ հանդիպման ժամանակ: Կարտման-Շիրվան-Նախիջեան համահայկական միութեան յայտարարութիւնը ստորեւ.



«Ատրպէյճանը կը շարունակէ միջազգային հանրութիւնը ապակողմորոշելու վտանգաւոր կիրառողքը: Այսօր Ատրպէյճանի նախագահ Իլիամ Ալիեւը ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Փիա Զաւումանի հետ հանդիպման ժամանակ նշած է, որ Ատրպէյճանը կը ներկայացնէ «համակեցութեան եւ վերադարձի յստակ եւ թափանցիկ ծրագիր», եւ մեղադրած է Հայաստանը այդ ծրագիրը մերժելու մէջ:

Այս դիտարկումը կը պարունակէ առնուազն քանի մը անճշտութիւններ: Նախ եւ առաջ մեծագոյն կեղծիք է «համակեցութեան եւ վերադարձի յստակ ու թափանցիկ» ծրագիրը, որուն բոլոր բաղադրատարրերը իրականութեան մէջ այլ բովանդակութիւն ունին:

Վերջին առնուազն երեսուն տարիներու ընթացքին Ատրպէյճանը շարունակաբար ապացուցած է հայ-ատրպէյճանական որեւէ համակեցութիւն բացառելու ձգտումը: Այս կը վկայեն ինչպէս պատմական Կարտմանի, Շիրվանի, Նախիջեանի ամբողջական բնի հայաթափումը, ինչպէս հայկական ժառանգութեան իւրացումն ու ոչնչացումը, այնպէս ալ քաղաքացիական պայտառի կացնահարումը եւ յանցագործի ազգային հերոսացումը, դպրոցական դասագիրքերուն մէջ հայատեացութեան աննախադէպ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ Կ'ԱՌԱՋԱՐԿԷ ԵՐԿԱՐԱԶԳԵԼ ՀԻՆ ՆՄՈՒՇԻ ԸՆՅԱԿՐԵՐՈՒ ՏՐԱՄԱԳԻՄԱՆ ԺԱՄԿԷՏԸ

ՀՀ կառավարութիւնը կ'առաջարկէ հնարաւորութիւն տալ լիազօր մարմին քաղաքացիներուն տակաւին տրամադրել հին նմուշի անցագրեր, մինչեւ կենսաչափական անձնագրերու եւ նոյնականացման քարտերու արդիական համակարգի ներդրումը:

Ազգային ժողովի նիստին համապատասխան նախագիծը ներկայացուց ՀՀ Ներքին գործերու նախարարութեան Գաղթի եւ քաղաքացիութեան ծառայութեան պետ Արմէն Ղազարեանը:

Ղազարեան նշեց, որ 2017 թուականի Յունուար 1-ին աւարտած է Հայաստանի Հանրապետութեան կենսաչափական անձնագրերու եւ նոյնականացման քարտերու համակարգը սպասարկող եւ բլանկներ մատակարարող լեհական ընկերութեան հետ կնքուած պայմանագրի ժամկետը, ինչով պայմանաւորուած աշխատանքներ տարուած են Հայաստանի մէջ կենսաչափական անցագրերու եւ նոյնականացման քարտերու թողարկման, արդիականացում հանրային հաւաստագրերու ենթակառուցուածքի համակարգի ներդրման ուղղութեամբ: Անոր խօսքով՝ հետագա-



յին կառավարութիւնը որոշում կայացուցած է երթալ աւելի լայն բարեփոխումներու եւ երկրին մէջ ներդնել ոչ միայն կենսաչափական փաստաթուղթերու տրամադրման համակարգ, այլեւ աւելցնել բնակչութեան ելեկտրոնային ծառայութիւններու մատուցման հնարաւորութիւնները:

«Առաջարկուող նախագիծը կ'առաջարկէ հնարաւորութիւն տալ լիազօր մարմինին տակաւին տրամադրելու հին նմուշի անցագրեր, մինչեւ համակարգի ամբողջական արդիականացումն ու ներդրումը», ըսաւ Արմէն Ղազարեան:

Ներքին գործերու նախարարութեան Գաղթի եւ քաղաքացիութեան ծառայութեան պետը նաեւ յիշեցուց, որ 2022-ին տեղի ունեցած է տեղեկատուական համակարգերու խորհուրդի նիստը, որով հաստատուած են նոյնականացման քարտերու եւ կենսաչափական անցագրերու նոր համակարգի ներդրման, անվտանգութեան պայմանները, մրցոյթի շրջանակները:

Ղազարեան նշեց, որ նիստի ընթացքին խորհուրդը վերահաստատած է նոր համակարգի ներդրման մշակման նախընտրելի ձեւաչափը, այն է՝ արտապատուիրակումը հանրային-մասնաւոր գործընկերութեան միջոցով:

քարոզութիւնը, եւ վերջապէս այն ցեղասպան քաղաքական եւ ռազմական վարքը, որուն ամբողջ աշխարհը կանանտես եղաւ 2020-2023 թուականներու ընթացքին Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան դէմ:

Նախագահ Ալիեւի յիշատակած «յստակ եւ թափանցիկ» ծրագիրը ատրպէյճանական մաքսիմալիզմի ամենացնուն օրինակն է, որ ամբողջ Հայաստանի Հանրապետութեան տարածքը կը համարէ ոչ միայն «արեւմտեան Ատրպէյճան», այլեւ՝ «ատրպէյճանական հնագոյն հայրենիք»: Մենք խորապէս կը ցաւինք պատմական այն թիր պատկերացումներուն համար, որոնք այսօր կը տիրեն Ատրպէյճանի մէջ: Ի յանդերձ նշեց, որ Արեւելեան Անդրկովկասի սկստմամբ «Ատրպէյճան» եզրը կիրառուած է միայն 1918 թուականին՝ փոխանուելով իրանեան Ատրպատականէն: Խորհուրդ կու տանք Ատրպէյճանին երբեմն դուրս նայիլ սեփական պատմական ընկալումներու պատճառով եւ ուսումնասիրել անտիկ եւ միջնադարեան հայ եւ օտարագրի պատմիչներու աշխատութիւնները, «հնագոյն» բառի բուն իմաստը ըմբռնելու համար:

Հայաստանի հասցեին հնչած մեղադրանքները նոյնքան անհիմն են, որքան սեփական յանցանքները թաքցնելու փորձերը: Տեղին է հարցնել Ատրպէյճանի նախագահին՝ ուր են պատմական Կարտմանի, Շիրվանի եւ Նախիջեանի մէջ դարերով բնակող հայերը, որոնք 90-ականներու բռնազաղթի ժամանակ կը կազմէին կէս միլիոնէն աւելի, ինչ ճակատագրի արժանացած է անոնց գոյքը, ինչու հետեւողականօրէն վերացուած է Պաքուի հայկական հետքերը, որն էր Հին Ջուղայի գերեզմանատան սկստմամբ տեղի ունեցած հաշուեյարդարին նպատակը:

Մենք կը յիշեցնենք նախագահ Ալիեւին, որ համակեցութիւնը կ'ենթադրէ մարդու հիմնարար իրաւունքները փոխադարձ յարգել եւ երաշխաւորուած անվտանգութիւնը ապահովել, որ հնարաւոր է միայն այն պարագային, եթէ Ատրպէյճանը հրաժարի հայատեացութեան վրայ հիմնուած պետական ներքին եւ արտաքին քաղաքական գիծէն, փաստացի ճանչնալ եւ յարգել Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը եւ քաղաքական ու պատմական հասունութիւնը ցուցաբերել սեփական յանցանքներուն համար պատասխանատուութիւն կրելու»:

ԱՐԱՐԱԴ ԳԻՄՆԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ՄԻՆՉԵՒ 17 ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱԿԻ 2-ՐԴ ՅԱՆՎՐ. ԷՔՈՒԱՏՈՐ, ՍՊԱՆԻԱ, ԱՆԳՐԻԱ ԵՒ ՄԵՆԵԿԱԼ ԱՆԿԱՍԵԼԻ

Ինտոնեգիայի ֆուտբոլի մարզադաշտերում վրայ շարունակուեցան մինչեւ 17 տարեկան տղոց Աշխարհի ֆուտբոլի բաժակի մրցումները: Մասնակցող 24 հաւաքականները բաժնուած են վեց խմբակի Իւրաքանչիւր խմբակի առաջին երկու դիրքերը գրաւած հաւաքականները:



Ներքեւ ամենալաւ չորս երրորդ դիրք գրաւած հաւաքականները պիտի անցնին վերջին 16 խումբերու փուլ: Ա.խմբակին մէջ, 2-րդ դիրքը գրաւող Էքուատոր յաղթեց առաջատար Մարոքին ու գրաւեց առաջատարի դիրքը: Բ.խմբակին մէջ, 2-րդ դիրքը գրաւող Սպանիոյ հաւաքականը յաղթեց առաջատար Մալիին ու գրաւեց առաջատարի դիրքը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները:

- Ա.խմբակ.** - Մարոք - Էքուատոր 0-2
- Ինտոնեգիա - Փանամա 1-1
- Դասաւորում.** 1) Էքուատոր 4 կէտ 3-1, 2)Մարոք 3 կէտ 2-2, 3) Ինտոնեգիա 2 կէտ 2-2, 4) Փանամա 1 կէտ 1-3
- Բ.խմբակ.** - Սպանիա (2) - Մալի (1) 1-0
- Իւզպէքիստան (4) - Գանատա (3) 3-0
- Դասաւորում.** 1) Սպանիա 6 կէտ 3-0, 2)Մալի 3 կէտ 3-1, 3) Իւզպէքիստան 3 կէտ 3-3, 4) Գանատա 0 կէտ 0-5
- Գ.խմբակ.** - Պրագիլ - Նոր Զալէտոնիա 9-0
- Անգլիա - Իրան 2-1
- Դասաւորում.** 1) Անգլիա 6 կէտ 12-1, 2)Պրագիլ 3 կէտ 11-3, 3) Իրան 3 կէտ 4-4, 4) Նոր Զալէտոնիա 0 կէտ 0-19
- Դ.խմբակ.** - Մենեկալ - Լեհաստան 4-1
- Ճափոն - Արժանթին 1-3
- Դասաւորում.** 1) Մենեկալ 6 կէտ 6-2, 2)Արժանթին 3 կէտ 4-3, 3) Ճափոն 3 կէտ 2-3, 4) Լեհաստան 0 կէտ 1-5

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 9-ՐԴ ՅԱՆՎՐ. ԱԼ ԱՐՁԵՏ, ՆԸԺՄԵ ԵՒ ԱՆՍԱՐ ՅԱՂԹԱԿԱՆ

Շաբաթավերջին սկսան Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան 9-րդ հանգրուանի մրցումները: Այս հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, առաջատար «Ալ Նըժմէ» մրցեցաւ 11-րդ դիրքը գրաւող «Յիքմէ»ի դէմ ճունիի «Ֆուատ Ետ-հապ» մարզադաշտին վրայ ու արձանագրեց իր 7-րդ յաղթանակը: Պաշտպան Մահեր Սապրա՝ 19-րդ եւ կինիապիսաուցի յարձակող Խոսէ Էմպալօ՝ 44-րդ վայրկեաններուն նշանակեցին խումբին կոլերը, մինչ կիսապաշտպան Ահմատ ժալլուլ տուգանային հարուածով 86-րդ վայրկեանին հաշիւը դարձուց 2-1: 2-րդ դիրքը գրաւող «Ալ Ահլըս» մրցեցաւ 8-րդ դիրքը գրաւող «Թատամոն Սուր»ի դէմ ու յաղթեց միակ կոլով: Մրցումի 48-րդ վայրկեանին, Սուրիացի կիսապաշտպան Սոհամմատ Ալմարմուր նշանակեց միակ կոլը: Իսկ այս հանգրուանի ամենահետաքրքրական մրցումին, 6-րդ դիրքը գրաւող «Ալ Սաֆա» մրցեցաւ 3-րդ դիրքը գրաւող «Ալ Պըրժ»ի դէմ ու մրցումը աւարտեցաւ հաւասարութեամբ: հաւասարակշռուած մրցումի 42-րդ վայրկեանին հոլանտացի կիսապաշտպան Ճորտի Պրոյսին տուգանային հարուածով յառաջ տարաւ «Ալ Սաֆա»ն: Իսկ 54-րդ վայրկեանին, կիսապաշտպան Յիլալ Ալ Յըլուէ տուգանային հարուածով հաշիւը դարձուց 1-1: 5-րդ դիրքը գրաւող «Ռասիկ» մրցեցաւ 7-րդ դիրքը գրաւող «Շապապ Ալ Սահէլ»ի դէմ ու կրեց իր երկրորդ պարտութիւնը: Մրցումի առաջին վայրկեանին, Յանի Տաքքուր յառաջ տարաւ «Շապապ Ալ Սահէլ»ը: 36-րդ վայրկեանին, Յընէն Յայտար հաշիւը դարձուց 1-1: Սակայն, 90+5-րդ վայրկեանին, Ալի Ֆաքիի նշանակեց «Շապապ Ալ Սահէլ»ի երկրորդ կոլը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները:

- Ալ Ահլըս - Թատամոն Սուր 1-0
- Ալ Անսար - Ալ Շապապ Ալ Ղազիյէ 2-0
- Ալ Սաֆա - Ալ Պըրժ 1-1, - Ալ Նըժմէ - Յիքմէ 2-1
- Թրիփուլի - Ալ Ահլի Նապաթիյէ 1-0
- Ռասիկ - Շապապ Ալ Սահէլ 1-2
- Դասաւորում. 1) Նըժմէ 8 մ 22 կէտ 20-5, 2)Ալ Ահլըս 22 կէտ 23-6, 3) Ալ Պըրժ 18 կէտ 16-8, 4) Ալ Անսար 16 կէտ 13-10:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 17-ՐԴ ՅԱՆՎՐ. ԱՐԱՐԱՏ-ԱՐՄԵՆԻԱ ԵՒ ՓԻՆԻԿ ՅԱՂԹԵՑԻՆ

Շաբաթավերջին սկսան Հայաստանի ֆուտբոլի ախոյեանութեան 17-րդ հանգրուանի մրցումները: Այս հանգրուանի ամենահետաքրքրական մրցումին, առաջատար «Փինիկ» իր դաշտին վրայ մրցեցաւ 2-րդ դիրքը գրաւող Արմավիրի «Նոա»ին դէմ ու արձանագրեց իր 14-րդ յաղթանակը: Մրցումի 3-րդ վայրկեանին, հոլանտացի յարձակող Իլիաս Ալիաֆթէ նշանակեց «Նոա»ի կոլը: Սակայն, Յովհաննէն Յամբարձումեան տուգանայինով՝ 45+1-րդ, 59-րդ եւ ֆրանսացի յարձակող վալենթ Կոնսալվէ՛՝ 47-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 3-1: Երրորդ դիրքը գրաւող «Արարատ-Արմենիա»ն իր դաշտին վրայ մրցեցաւ 8-րդ

դիրքը գրաւող Կիւմրիի «Շիրակ»ին դէմ, յաղթանակ տարաւ ու գրաւեց 2-րդ դիրքը: Պրագիլցի պաշտպան Լեո Սիլվա՝ 61-րդ եւ գոլմպիացի յարձակող Խուան Տուարթե՛՝ 86-րդ վայրկեաններուն նշանակեցին խումբին կոլերը: Իսկ 10-րդ դիրքը գրաւող «Վեսթ Արմենիա»ն իր դաշտին վրայ կրցաւ յաղթել 7-րդ դիրքը գրաւող «ԲԿՄԱ»ին, ռուս կիսապաշտպան Միխայիլ Սթրելնիքի 11-րդ վայրկեանին նշանակած կոլով: Այս հանգրուանի վերջին մրցումին, 5-րդ դիրքը գրաւող «Ալաշկերտ» իր դաշտէն դուրս մրցեցաւ 6-րդ դիրքը գրաւող «Արարատ»ի դէմ ու յաղթեց միակ կոլով: Մրցումի 44-րդ վայրկեանին, վրացի յարձակող Լեւան Զուբալիա տուգանային հարուածով նշանակեց կոլը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները:

- Վեսթ Արմենիա - ԲԿՄԱ Երեւան 1-0
- Փինիկ - Նոա Արմավիր 3-1
- Արարատ-Արմենիա - Շիրակ Կիւմրի 2-0
- Վան Չարեւեցաւան - Ուրարտու 2-2
- Արարատ - Ալաշկերտ 0-1
- Դասաւորում. 1) Փինիկ 45 կէտ 47-10, 2)Արարատ-Արմենիա 35 կէտ 39-18, 3) Նոա 33 կէտ 33-17, 4) Ուրարտու 31 կէտ 30-24, 5) Ալաշկերտ 29 կէտ 29-22, 6) Արարատ 20 կէտ 16-28:

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՅՏԱԳԻՐ

- ԱՇԽԱՐՀԻ ՄԻՆՉԵՒ 17 ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱԿԻ 2-ՐԴ ՅԱՆՎՐ.**
- 11:00 ԱՄՆ (2) - Պուրթինա Ֆասո (4)
- 11:00 Մեքսիքա (3) - Վենեզուելա (1)
- 14:00 Ֆրանսա (1) - Հար.Քորեա (3)
- 14:00 Նոր Զելանտա (4) - Գերմանիա (2)
- ԵՌՈՂՊԱՅԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 8-ՐԴ ՅԱՆՎՐՈՒԱՆ**
- 21:45 Իսրայէլ (3) - Չուիցերիա (2)
- ԵՌՈՂՊԱՅԻ ՄԻՆՉԵՒ 19 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՈՅ. Ա. ՅԱՆՎՐՈՒԱՆ**
- 13:30 Հայաստան (95) - Խրուաթիա (10)
- ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱԿԻ ԱՓՐԻԿԵՒ Ա. ՅԱՆՎՐՈՒԱՆ**
- 15:00 Ռուանտա (140) - Չիմպապուէ (125)
- 15:00 Հասարակած.Կինիա (91) - Նամիպիա (114)
- 18:00 Դեմ.Բոնկո (65) - Մալիտանիա (101)
- 21:00 Եթովպիա (143) - Սիերրա Լեոնէ (122)
- ՄԻՋՆԱԳՅԻՆ ԲԱՐԵՎԱՍՏԱՆԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ**
- 21:45 Պեճմէ (5) - Սերպիա (29)
- ԵՌՈՂՊԱՅԻ ԿԻՆԵՐՈՒ ԶԵՄՓԵՆՆԵՆ ԼԻԿԻ ԽՍԲ.Ա. ՅԱՆՎՐ.**
- 19:45 Պայըն Միլիիի (5) - Ռոմա (19)
- 19:45 Փարիզ ՖՍ (25) - Հապըն (18)
- 22:00 Այաքս Ամսթերտամ (41) - Փարի ՍԵՆ Շերմէն (4)
- 22:00 Ռեալ Մատրիտ (10) - Զելսի (6)
- ԱՆԳՐԻՑ ԲԱԺԱԿԻ 1/128-ՐԴ ՄԱՐՏ.**
- 21:45 Բրէյ Վելի (Ը.) - Չարլթըն Աթլէթիք (Գ.)
- ՊԱՏԵՐՊՈՒԼԻ ԵՆ.ՊԻ.ԷՅ.-Ի ԱՆՈՅՏԱՆՈՒԹԻՆ**
- 02:30 Ֆիլատելֆիա 76րդ (1) - Պոսթըն Սելթիքս (2)
- 05:00 ԼԱ Լեյքըրզ (7) - Սաքրամենթո Զինկզ (8)
- ՊԱՏԵՐՊՈՒԼԻ ԵՌՈՂՈՒԿԻ 8-ՐԴ ՅԱՆՎՐՈՒԱՆ**
- 21:00 ԱԼՊԱ Պերլին (17) - ԱՍՎԷԼ Վիլտորպան (18)
- 21:15 Փանաթինայքոս Աթէք (8) - ժալկիրիս Զաուսա (11)
- 21:30 Պասքոնիա Վիթորիա (12) - Պարսելոնա (2)
- 21:30 Պայըն Միլիիի (16) - Փարթիզան Պելկրատ (9)
- ԹԵՆԻՍԻ ՄԱՍԹԵՐՆԻ ՄԱՐՏ. ՄՐՅ. 2-ՐԴ ՅԱՆՎՐ.**
- 14:00-Էն սկսեալ, «beinsports» կայանէն

ՃԱՏՐԱԿ ԵՌՈՂՊԱՅԻ ԽՍԲԱՅԻՆ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ՝ 5-ՐԴ ԵՒ 11-ՐԴ

Մոնթենեկրոյի Պուտուա քաղաքի մարզական պալատին մէջ շարունակուեցան ճատրակի Եւրոպայի խմբային ախոյեանութեան մրցումները: Մրցաշարքին կը մասնակցին



ցին տղոց 38 եւ կիներու 32 հաւաքականներ: Մրցաշարքը կը բաղկանայ 9 հանգրուանէ: Իր երկրորդ մրցումին Հայաստանի տղոց հաւաքականը մրցեցաւ Խրուաթիոյ դէմ ու հաւասարեցաւ: Երրորդ մրցումին, Հայաստան յաղթեց Աւստրիոյ հաւաքականին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները:

- 2-րդ հանգրուան. - Հայաստան - Խրուաթիա 2-2
- Գերմանիա - Հունգարիա 2.5-1.5
- 3-րդ հանգրուան. - Աւստրիա - Հայաստան 1.5-2.5
- Սերպիա - Գերմանիա 1.5-2.5
- Դասաւորում. 1)Լեհաստան 6 կէտ / յաւելեալ ցուցանիշ. 20, 2)Գերմանիա 6 կէտ / 17.5, 3)Իսրայէլ 5 կէտ / 20, 5)Հայաստան 5 կէտ / 15.5
- Հայաստանի հաւաքականի ամենալաւ արդիւնքները արձանագրեցին հետեւեալները.
- 1) Գաբրիէլ Սարգիսեան 2 կէտ, 2) Սամուէլ Տեր Սահակեան 1.5 կէտ, 3) Հրանդ Մելքունեան 1.5 կէտ, 4) Շանթ Սարգսեան 1.5 կէտ, 5) Հայկ Մարտիրոսեան 0.5 կէտ
- Հայաստանի կիներու հաւաքականը իր երկրորդ մրցումին մրցեցաւ Սերպիոյ դէմ ու պարտուեցաւ: Երրորդ մրցումին, Հայաստան յաղթեց Իտալիոյ հաւաքականին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.
- 2-րդ հանգրուան. - Սերպիա - Հայաստան 2.5-1.5
- Ֆրանսա - Անգլիա 3.5-0.5
- 3-րդ հանգրուան. - Հայաստան - Իտալիա 3.5-0.5
- Ֆրանսա - Սպանիա 3.5-0.5

Դասաւորում. 1)Ֆրանսա 6 կէտ / յաւելեալ ցուցանիշ. 24.5, 2)Ատրպէյճան 6 կէտ / 22, 3)Գերմանիա 5 կէտ / 16, 11)Հայաստան 4 կէտ / 13

Հայաստանի հաւաքականի ամենալաւ արդիւնքները արձանագրեցին հետեւեալները.

- 1) Մարիամ Մկրտչեան 2.5 կէտ, 2) Լիլիթ Մկրտչեան 2 կէտ, 3) Էլինա Դանիէլեան 1.5 կէտ,
- 4) Սուսանա Կապոյեան 1 կէտ, 5) Մարիա Գեորգեան 1 կէտ:

ՊԱՏԵՐՊՈՒԼ ԵՌՈՂՈՒԿԻ 7-ՐԴ ՅԱՆՎՐՈՒԱՆ ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ ՅԱՂԹԵՑ ՊՈՒՆՆԻԱՅԻՆ

Շաբաթավերջին տեղի ունեցան Եւրոպայի պասթեպոլի ալումբներու առաջնակարգ մրցաշարքի՝ Եւրոլիկի ախոյեանութեան 7-րդ հանգրուանի մրցումները 18 ալումբներու մասնակցութեամբ: Այս հանգրուանի ամենահետաքրքրական մրցումին, առաջատար «Ռեալ մատրիտ» իր դաշտին վրայ ընրուեց 3-րդ դիրքը գրաւող Պուլնիայի



«Վիրթիս»ը եւ յաղթանակ տարաւ: «Ռեալ Մատրիտ»ի ամենալաւ մարզիկն էր արժանթինցի կարտ Ֆաբրիսո Զամիագո՝ փըրֆորմընս ինտէքս 39, իսկ «Վիրթիս»ի ամենալաւ նշանակողն էր իտալացի կարտ Տանիէլ Դեքքէ՝ փըրֆորմընս ինտէքս 15: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Օլիմպիաքոս Փիրէու (Յուն.) - Պասքոնիա Վիթորիա (Սպ.) 74-75
- Անտոլու Էֆէս (Թրք.) - ժալկիրիս Զաուսա (Լիթ.) 86-82
- Մաքապի ԹԱ (Իսր.) - Պայըն Միլիիի (Գեր.) 93-90
- Փարթիզան Պելկրատ (Սրպ.) - Ֆեներպահիէ (Թրք.) 85-84
- Արմանի Միլան (Իտ.) - Վալենսիա Պասքէթ (Սպ.) 83-52
- Ռեալ Մատրիտ (Սպ.) - Վիրթիս Պուլնիա (Իտ.) 100-74
- ԱԼՊԱ Պերլին (Գեր.) - Փանաթինայքոս Աթէք (Յուն.) 85-99
- Պարսելոնա (Սպ.) - Յովենա Չվեգտա (Սրպ.) 86-81
- ԱՍ Մոնաքո (Ֆր.) - ԱՍՎԷԼ Վիլտորպան (Ֆր.) 80-70
- Դասաւորում. 1) Ռեալ Մատրիտ 6 յաղթ - 0 պարտ / կէտերու տարբ. +83, 2) Պարսելոնա 6-1 / +86, 3) Ֆեներպահիէ 5-2 / +36, 4) Մոնաքո 5-2 / +32, 5) Վիրթիս Պուլնիա 5-2 / +27, 6)Վալենսիա Պասքէթ 5-2 / +5, 7) Մաքապի ԹԱ 4-2 / -11, 8) Փանաթինայքոս 3-4 / +13:

ՊԱՏԵՐՊՈՒԼ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 3-ՐԴ ՅԱՆՎՐՈՒԱՆ ՊԵՅՐՈՒԹ ԶԼԱՊ ԵՒ ՅԻԶՄԵ ԱՆԿԱՍԵԼԻ

Շաբաթավերջին տեղի ունեցան Լիբանանի պասթեպոլի ախոյեանութեան 3-րդ հանգրուանի մրցումները: Այս հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, 9-րդ դիրքը գրաւող «Անդրանիկ» իր դաշտէն դուրս մրցեցաւ 5-րդ դիրքը



գրաւող «Անթոնին»ի դէմ ու արձանագրեց իր առաջին յաղթանակը: «Անթոնին»ի ամենալաւ նշանակողն էր Ճորտըն Տէյվիս՝ 21 կէտ, 3 ռիպաուստ, 4 փոխանցում, իսկ «Անդրանիկ»ի ամենալաւ նշանակողն էր Զորիսթիան Յարպի՝ 25 կէտ, 3 ռիպաուստ եւ 3 փոխանցում: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Յիքմէ - Յ.Մ.Ը.Մ. 85-79
- Ն.Ս.Ա.Անթիլիաս - Ռիատի Պէյրութ 50-88
- Անթոնին Պասպտա - Անդրանիկ Պէյրութ 70-83
- Հունիս - Պէյրութ Զլապ 80-99
- Մարիսթ Շանվիլ - Մէյրուպ 74-68
- Դասաւորում. 1) Պէյրութ Զլապ 3 յաղթ - 0 պարտ / կէտերու տարբ. +70, 2) Յիքմէ 3-0 / +38, 3) Ռիատի Պէյրութ 2-1 / +63, 4) Մարիսթ 2-1 / -19, 6) Անդրանիկ 1-2 / -5, 7) Յ.Մ.Ը.Մ. 1-2 / -1:

ARARAD DAILY NEWSPAPER
 MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
 Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
 Beirut | Lebanon | www.araraddaily.com
 email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية | المحبرة المسؤولة: أني صرافيان
 تصدر عن شركة مسيصة للمباعة والنشر (ش.م.م.)